338.14
4-21

1935

17 FEB 2010

Ա.Մ.Խ.Հ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Ա.Մ.Խ.Հ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԿԱԹՆԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

338.14
4-91

ՀՍԽՀ-ССР

ԱԶԵՐՆԵՇՐ
Գյուղատնտ. բաժին
Բագու—1935

17 MAY 2013
30567
528.14
Կ-21

Խմբագիր Լ. Դանիելյան
Սրբագրիչ-Թողարկու Ա. Արխան

Baş Mətbuat Mydırlligi Myvəkkiligi № 2253. Sifariş № 242. Tirazь 2000. Istehsalata verilmiş 22/III-35. Capa imzalanmьş 31/III-1935. Cap listi 1/2. Kaqьz formatь 82×110. Azərnəşr mətbəəsində basьldь. 26-lar adьna „Kitab Sarajь". Bakь, Əli Bajramov kycəsi.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԽՉ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԿԱԹՆԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հաստատված է Հողժողկոմատի կողմից*
*1935 թ. փետրվարի 19-ին*

1001
38788

1. Կոլտնտեսային կաթնապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է անհատական գործարքայնի հիման վրա, հաշվելով աշխորերը—անասունների սպասարկման, մատղաշների պահպանման, բեղմնավորման պլանների կատարման և ըստ տված արտադրանքի որակի և քանակի (կաթ և միս) համար։

2. Կաթնա-ապրանքային ֆերմայի անասունները խնամելու համար՝ կազմակերպվում է մշտական բրիգադ —բրիգադիրի գլխավորությամբ։

Ֆերմայում 100-ից ավելի կովի և համապատասխան քանակությամբ մատղաշների առկայության դեպքում՝ կազմակերպվում է մի քանի բրիգադ — օրինակ՝ յուրաքանչյուր 60 կովի հոտի ամբողջ շրջանառության համար առանձին բրիգադ։

Մշտական բրիգադում աշխատող կոլտնտեսականների քանակը որոշում է կոլտնտեսության վարչությունը ֆերմայում, կամ բրիգադում յեղած ամբողջ հոտի լրիվ սպասարկումը հաշվի առնելով։

Անասունների խնամքի գործում, կոլտնտեսականների գործնական փորձառության որակը բարձրացնելու նպատակով, պետք է կոլտնտեսականների աշխատանքի տևողությունը կաթնա-ապրանքայի ֆերմայում 3 տարուց պակաս չլինի։

3. Կաթնա-ապրանքային այն ֆերման, որտեղ սպասարկում է մի բրիգադ, նրա բրիգադիրը հանդիսանում է միաժամանակ և ֆերմայի վարիչը։ Այն ֆերմայում, ուր 2 կամ ավելի բրիգադ կա ընտրվում է ֆերմայի համար հատուկ վարիչ։

*Այն ֆերմաներում, ուր կովերը և համապատասխան քանակի մատղաշները 25-30-ից պակաս են, բրիգադիրի-ֆերմայի վարիչի պարտականությունը կատարում է կոլտնտեսականներից մեկն ու մեկը, վորն զբաղվում է անասունների խնամքի գործով։ Այս դեպքում խնամելու համար նրան ավելի քիչ անասուն է տրվում, քան մյուս կոլտնտեսականներին։*

*4. Ցեղական և խոշոր (ավելի քան 100 կով) ֆերմաների վարիչների նշանակում, կամ փոփոխումը կատարում է Հողժողկոմատը շրջանային հողբաժնի առաջադրությամբ։*

*Մնացած կաթնա-ապրանքային ֆերմաների վարիչների նշանակումն ու փոփոխումը կատարում է շրջհողբաժինը-կոլտնտվարչության առաջադրությամբ։*

*5. Կաթնա-ապրանքային ֆերմայում աշխատող յուրաքանչյուր բրիգադին 3 տարուց վոչ պակաս ժամանակով, սպասարկելու համար ամրացվում է համապատասխան քանակի անասուն, անհրաժեշտ շենք և գործիքներ (կաթնամանեղեն, սայլեր, բանանասուն, հեծնելու ձի, եշ և այլն)։*

*Ըստ վորում ցեղական և բարձր-մթերատու անասունները պետք է ապահովել լավ շենքերով, լավ կերով և լավ սպասարկող կոլտնտեսականներով։*

*6. Անասնաբուծության զարգացման պետական պլանի համաձայն կոլտնտվարչությունը կազմում է ֆերմայի և յուրաքանչյուր բրիգադի արտադրական առաջադրանքը։ Կոլտնտվարչությունը յելնելով ֆերմայի և բրիգադի տարեկան առաջադրանքից, զոոտեխնիկի կամ տեխնիկ—անասնաբուժի մասնակցությամբ, տարեսկզբին յուրաքանչյուր բրիգադի և յուրաքանչյուր կոլտնտեսականի համար սահմանում է ամսեկան արտադրական առաջադրանք, թե վորքան պետք է կաթ կթվի, վորքան ծին պետք է լինի, վորքան կով և սերմնավորման հասակի հերինջ պետք է բեղմնավորվի, այդ թվում, թե վորքան պետք է բեղմնավորվեն ցեղական ցուլերով։ Տարեսկզբին սահմանած ամսեկան արտադրական առաջադրանքները ճշտվում են ամեն ամսի սկզբին։*

*7. Համաձայն յուրաքանչյուր կովի կաթնատվության տարեկան առաջադրանքի՝ կոլտնտվարչությունը տարեսկզբին (բայց հունվարի 15-ից վոչ ուշ) ֆերմայի կովերը բաժանում է խմբերի ըստ կաթնատվության, և ամբողջ տարվա համար սահմանում է գնահատման նորմաներ՝ կթողների, անասնապահների և հովիվների համար, ըստ վորում գնահատումները սահմանվում են յելնելով կթողին, անասնապահին և հովիվին ամրացրած ամբողջ կովերի մեկ տարվա միջին կաթնատվությունից։*

*8. Կթողը սպասարկում է 10-12 կով, վորոնք ամրացվում են նրան 3 տարուց վոչ պակաս ժամանակով։ Կովերի սպասարկման հետ միասին կթողի պարտականությունների մեջ մտնում են նաև նրան ամրացրած նույն կովերի հորթերի խնամքը՝ մինչև ծծից կտրելը (6-7 ամիս)։*



## Կթող—անասնապահի աշխօրերը հաշվվում է—

*1. ա) Արոտի շրջանում յուրաքանչյուր կովի խնամքի համար ամսական . . . . . . 0,25 աշխոր.*

*բ.—Մսուրային (ախոռային) շրջանում յուրաքանչյուր կովի խնամքի համար ամսական— . . . 1,25. աշխոր.*

*2. Կովը սերմնավորելու և բեղմնավորելու համար 2 աշխոր*

*3. Կովը ծինի պատրաստելու և յուրաքանչյուր կենդանի ծնված հորթի համար . . . . . 3 աշխոր*

*4. Հորթը մինչև ծծից կտրելն աճեցնելու համար, ըստ նրա զարգացման և գիրության-ամսական . 1 մինչև 1,2 աշխոր.*

*5. Կթող անասունների ամրացրած կովերից կթած յուրաքանչյուր 100 լիտր կաթից—*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մի կովից տարեկան միջին թվով | մինչև 600 | լիտր կաթ կթելու դեպքում | 2 | աշխոր |
| „ „ „ „ „ | 600 մինչև 800 | „ „ „ „ | 1,7 | „ |
| „ „ „ „ „ | 800 „ 1000 | „ „ „ „ | 1,6 | „ |
| „ „ „ „ „ | 1000 „ 1200 | „ „ „ „ | 1,5 | „ |
| „ „ „ „ „ | 1200 „ 1500 | „ „ „ „ | 1,4 | „ |

*Կթողն իրեն կցված կթան կովերի հորթերը մինչև ծծից կտրելը և հերինջներ խնամելու համար, վորպես պարգև, ստանում է մեկ հորթ։*

*9. Անասնապահ—հովիվը սպասարկում է.—*

*Մսուրի շրջանում 3—4 կթողների ամրացված 30—40 կով և 1-2 արտադրող ցուլեր։*

*Արոտի շրջանում անասնապահը հանդիսանում է հովիվը, վորը ստանում է նաև մի ոգնական և սպասարկում է 60—80 կովի։*

*Անասնապահ հովիվի աշխօրերը հաշվվում են—*

### ա) Մսուրի շրջանում

*1. Յուրաքանչյուր կովի խնամքի համար ամսեկան 0,20 աշխոր*

*2. Կովը սերմնավորելու —բեղմնավորելու համար 1,3 աշխոր*

*3. Կովը ծնի պատրաստելու և ծնված յուրաքանչյուր կենդանի հորթի համար. . . . . . . . . 2 աշխոր.*

*4. Յուրաքանչյուր արտադրող ցուլի խնամքի համար՝ ամսական . . . . . . . . . . . 3 աշխոր.*

5. Նրան ամրացրած կովերից կթած յուրաքանչյուր 100 լիտր կաթից—

Մի կովից տարեկ. միջին թվով մինչև 600 լիտր կաթ կթելու դեպքում 0,9 աշխօր
„ „ „ „ „ 600 մինչև 800 „ „ „ „ 0,8 „
„ „ „ „ „ 800 „ 1000 „ „ „ „ 0,7 „
„ „ „ „ „ 1000 „ 1200 „ „ „ „ 0,6 „
„ „ „ „ „ 1200 „ 1500 „ „ „ „ 0,5 „

Հովիվին հանձնարարած բոլոր անասունների 95 տոկոսից վոչ պակասը տարվա ընթացքում հաջող ծնելու դեպքում, վորպես պարգև, հովիվն ստանում մի հորթ.

## բ) Արոտի շրջանում

1) Յուրաքանչյուր ամիս մի կովի արածման համար 0,15 աշխօր

2) Արոտում սերմնավորված և բեղմնավորված յուրաքանչյուր կովի համար . . . . . . 0,70 աշխօր.

3) Արոտում ծնված յուրաքանչյուր առողջ հատի համար 0,70 աշխօր.

4. Արոտի շրջանում արածացվող նախիրի կովերից ստացված յուրաքանչյուր 100 լիտր կաթի համար

Մի կովից տարեկան միջին թվով մինչև 600 լիտր կաթ կթելու դեպքում 0.40 աշխօր
» » » » » » 600—800 „ » „ դեպքում 0 30 աշխօր
» » » » » » 800—1000 » » „ դեպքում 0.25 աշխօր
» » » „ » » 1000—1200 „ » „ դեպքում 0.20 աշխօր
» » » „ » » 1200–1500 » „ » դեպքում 0.15 աշխօր

10. Կթող կանանց, նախրապանների և հովիվների աշխօրերը գրանցվումեն հետևյալ ժամկետներում.—

Կաթի համար—յուրաքանչյուր 5 օրը մի անգամ։

Խնամքի համար—ամսվա վերջում։

Զուգավորման համար—բեղմնավորումը վորոշվելուց հետո։

11. Մսուրային խնամքի ժամանակ.— հովիվ անասնապահը պետք է խնամի 30 գլուխ մատղաշ անասուն։

Արոտի շրջանում — խնամում է 50 գլուխ մատղաշ անասուն։ Մատղաշների թիվը 50-ից ավել լինելու դեպքում հովիվը ստանում է մի ոգնական։

Մատղաշները խնամող հովիվ անասնապահի աշխօրերը հաշվվում է

## ա) Մսուրի շրջանում

1. Մի գլուխ մատղաշ անասուն խնամելու և նրան աճեցնելու համար նույն մատղաշի աճման և գիրացման համար ստանում է ամսվա վերջին . . . . . 0,8—1 աշխօր



2. Սերմնավորման հասակում գտնվող յուրաքանչյուր հերինջի զուգավորման և բեղմնավորման համար . . 2 աշխօր։

## բ) Արոտի շրջանում

1. Յուրաքանչյուր գլուխ արածացման համար, ըստ նրա վիճակի և գիրության—ամսական . . . . . .0,4-0,6 աշխօր.

2. Հերինջներին սերմնավորելու բեղմնավորելու համար 0,50 աշխօր

12. Հորթարածը սպասարկում է 30-35 հորթի, վորի աշխօրերը հաշվվում են.—

1. Արածացնելու և յուրաքանչյուր հորթի խնամելը մինչև 3 ամիս հասակը, հաշվելով աճումն ու գերանալը—ամսական— 0,9 մինչև 1 աշխօր

2. Արածացնելու և յուրաքանչյուր հորթի պահելը 3 ամսականից մինչև ծծից կտրելու ժամանակը, ամսական— 0,6 մինչև 0,7 աշխօր։

13. Մատղաշների հովվի և հորթարածի աշխօրերը հաշվվում է ամեն ամսվա վերջում վորակի հանձնաժողովի, կոլտնտվարչության և ֆերմայի վարիչ-բրիգադի մասնակցությամբ մատղաշների վիճակն ու գերությունը քննելուց հետո։

14. Այն կոլտնտեսականները, վորոնք ֆերմայում աշխատել են 2 տարի, նրանց աշխօրերի գնահատումները բարձրացվում են վերը հիշած նորմաներից 10 տոկոսով, իսկ յերեք և ավելի տարիներ աշխատողների համար—15 տոկոսով։

15. Մսացու անասունների հովիվը բաց դաշտում յեղած ժամանակ մի ոգնականի հետ սպասարկում է 30—40 գլուխ անասունի։ Բաց դաշտերում յեղած ժամանակ հովվի աշխօրերը հաշվվում են.—

1. Յուրաքանչյուր գլուխ անասուն արածացնելու համար. ամսակա 0,25 աշխօր,

2. Միջին գիրությունից յուրաքանչյուր գլուխ անասունի համար. դաշտից իջնելուց հետո . . . . . . . . . 3 աշխօր

3. Գեր ու յուղալի յուրաքանչյուր գլուխ անասունի համար —դաշտից իջնելուց հետո . . . . . . . . . . 5 աշխօր.

16. Ջրկիրների և կերակրողների, հովվի ոգնականների և հսկիչների աշխատանքի գնահատականը ամեն մի առանձին դեպքում հաստատում է կոլտնտվարչությունը։

Ֆերման սպասարկող անասնաբուժի աշխատանքի գնահատականը յեվս վորոշում է կոլտնտվարչությունը, համաձայն անասնաբուժի վորակավորման, կատարած աշխատանքի վորակին և թե վորքան նրա բանվորական օրը ծանրաբեռնված է լինում։

17. Ֆերմայում 1 տարուց փոք պակաս աշխատող ֆերմայի վարիչի և բրիգադիրի աշխօրերը հաշվվում են յերրորդ կարգով (մի աշխօր), իսկ յերկու տարուց ավել աշխատողներինը 4 րդ կարգով (1,25 աշխօր)։

Անասնաբուծական 5-ամսյա կուրսերի պատրաստականություն ունեցող ֆերմաների վարիչների և բրիգադիրների աշխատանքը 15 տոկոսով բարձր է գնահատվում։

25—30 գլխից պակաս անասուն ունեցող կաթնա-ապրանքային ֆերմաներում վարիչի—բրիգադիրի (տես. 3-րդ կետը) աշխօրերը հաշվում են հաստատված գներով նրան ամրացված անասունների սպասարկման համար, բացի այդ, ֆերմայի աշխատանքների ղեկավարման համար ավելացվում է նրա վաստակած աշխօրերի քանակի 15—25 տոկոսը։

Կաթնա-ապրանքային ֆերմաների անասնաբուժ-տեխնիկների աշխօրերը հաշվվում է յերրորդ կարգով (1 աշխօր) յելնելով անասնաբուժ-տեխնիկի վորակավորումից, պրակտիկ աշխատանքի ստաժից, ֆերմայում անասնաբուծական աշխատանքների դրվածքից՝ աշխօրին 25%-ի չափ լրացուցիչ հավելում է կատարվում։

18. Այն դեպքում, յերբ ապրանքային ֆերմայում խառն են անասունները և աննշան է ապրանքների թիվը անասունների այս կամ այն տեսակը ամրացվում է առանձին կոլտնտեսականների, ըստ վորում աշխատանքի վարձատրումը կատարվում է կոլտնտեսական—ապրանքային ֆերմաների համար ընդունված կանոնադրության համաձայն։

Յեթե ֆերմայի բրիգադը չի կատարում արտադրական պլանը, ապա ֆերմայի վարիչի, բրիգադիրի և տեխնիկ անասնապահի աշխօրերից դուրս են գալիս։

Կաթնատնտեսական ապրանքային ֆերմայում, անասնապահական բրիգադայի անդամներին, վորոնք լավ աշխատանքի հետևանքով, ապահովում են կովի բարձր կաթնատվությունը, լավագույն գիրությունը և հաջող ծննդաբերությունը բոլոր կովերից և հերինջներից, և մատղաշների լրիվ պահպանումը, կոլխոզի վարչությունը. աշխօրեր է հաշվում, բոլոր վաստակած աշխօրերից 10 տոկոսի սահմաններում. աչքի ընկնող հարվածայիններին նույն, ցուցանիշների համար մինչև 15 տոկոս, իսկ բրիգադիրին, տեխնիկ—անասնաբուժին և ֆերմայի վարիչին մինչև 20 տոկոս աշխօր։ Լավ աշխատանքների համար, աշխօրեր հաշվում են բրիգադի և նրա առանձին անդամների կողմից կոլխոզի վարչության տված արտադրական առաջադրանքը կատարելուց հետո.

20. Անասնապահական բրիգադի անդամի, ֆերմայի վարիչի և տեխնիկ—անասնաբուժի յերբ վերջիններիս վատ աշխատանքի հետևանքով թույլ են տրվել կովերի սուբահ մնալը, անհաջող ծննդաբերություն, մատղաշների փչացում, անասունների նիհարել և ծրագրում նախատեսնված կաթնատվության նորմաների իջեցում, կոլխոզի վարչությունը պահում է վաստակած բոլոր աշխօրերի մինչև 10 տոկոսի չափ։

Աշխօրերի պահումը վատ աշխատանքի համար, կատարվում է, յուրաքանչյուր ամսվա վերջում, վորի ընթացքում տեղի յե ունեցել, անասունների փչացումը անհաջող ծննդաբերությանը, սուբահ մնալը, և անասունների նիհարումը։ Պահումների քանակը վատ աշխատանքի առանձին ցուցանիշների համար, սահմանում է կոլխոզի վարչությունը, այն հաշվով վոր հանումների ամբողջ գումարը տարվա ընթացքում անասնապահական բրիգադի անդամների, ֆերմայի վարիչի, և տեխնիկ—անասնաբուժի վաստակած աշխօրերի 10 տոկոսից բարձր չլինի։

21. Յուրաքանչյուր 10 կովից և հերինջից, 8-ից ավելի հորթ ստանալու և մինչև մի տարեկան հասակը խնամելու դեպքում, կթողներին, հորթապահներին և անասնապահներին պարգևատրելուց հետո՝ 8-ից ավել հորթերը գնում են բրիգադում աշխատող մյուս հարվածային կոլտնտեսականների պարգևատրմանը։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

277

ASŞÇ XALQ TOPRAQ QOMISARLЬĢЬ

# ASŞÇ qolxoz syd əmtiə fermalarьnda əmək təşkili haqqьnda QAJDALAR

AZƏRNƏŞR
Kənt-təsərryfat şө'вəsi
Bakь—1935

ՀՀ Ազգային գրադարան
NL0205983

30.567